յայլ տեղիս, ուր և ժամանեցին խռովարար ոսք նորին։

Եւ 'ի լինել այսպէս սասակացաւ խռովութիւն 'ի մէջ երկուց ազգաց. վիճէին եւ հակառակէին ընդ միմեանս, ուր և պատահէին։ Տեսեալ Հայոց թէ օր քան զօր բազմանան չարիք 'ի քաղաքին Եւդոկեայ յերեսաց անզգամին Եուսուփայ, դիմեցին առ դատաւորն հանդերձ առաջնորդովք, և խնդրեցին աքսորել զայրն 'ի քաղաքէ անտի, և բառնալ զչարն 'ի միջոյ. զի վրդովեալ էր զխաղաղութիւն ժողովրդոց։ Դատաւորն գրեալ 'ի Կեսարիա՝ եհարց ցնոսա, թէ ո՞րպիսի ոք իցէ Եուսուփն. քրիստոնեայք և այլազգիք քաղաքին ետուն պատասխանի, թէ է այր չարաբարոյ և խռովարար՝ հոչակաւոր յամենայն վատթարութիւնս, զի ձեռնտուութեամբ եղբօր իւրոյ 'ի Կոստանդինուպոլիս առեալ հրովարտակ ինչ՝ շրջի բանսարկութեամբ և մատնութեամբ յամենայն տեղիս խռովել զժողովուրդն, ըստ բնական բարուց իւրոց՝ որպէս արար աստ։

Առեալ զայս գիր դատաւորին Եւդոկիայ՝ ազդ արար 'ի Դուռն. հասին անդ և թուղթք դանկատանացն Հայոց 'ի քաղաքաց և 'ի գաւառաց. լուաւ նաեւ զայսոսիկ անցս եւ Յովհաննէս Պատրիարք Բիւզանդիոյ. գրեալ էր նաեւ Գրիգոր Պատրիարք յԵրուսաղէմէ զնեղութիւնս ազգին. եւ նա բողոք եբարձ 'ի Դուռն, թէ ո՛րպէս Յոյնք խարէյութեամբ առեալ հրովարտակ՝ զօրութեամբ նորին հայհոյեն և թշնամանեն զազգն, ուր և պատահեսցին. եւ 'ի պատասխանել նոցին, իբր ասստամբք կայսերական հրամանին, մատնին 'ի ձեռս բռնաւորաց և տուգանին 'ի նոցանէ, մինչեւ տաղտկանալ ամենեցուն. եւ այլ սոցին նման բանք։ Գրեցաւ հրովարտակ դարձեալ սակս խափանելոյ զբռնութիւնս Յունաց. 'ի բաց առնուլ զհրովարտակն առաջին և զգիր դատաւորին Կեսարիոյ՝ ուր ուրեք եւ գտցի, և առաքել 'ի Դուռն. ջնջել զարձանագրութիւնս նոցին 'ի դիւանաց և 'ի դատարանաց, եւ արձանագրել զհրովարտակն Հայոց։ Ի հասանիլ այսր հրովարտակի յարեւելս, դատաւորք ծանուցին զմիտս նորա Հայոց և Յունաց, և պատուէր ետուն երկաքանչիւրոց չյուզել այլ եւս զխռովութիւնն զայն 'ի միջի իւրեանց. եւ սպառնացան եւս, ըստ հրամանի արքային, ածել պատիժ պատուհա-